Հավելված N27
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Ձեռներեցության զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.12-Մ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ մյուս ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտում տեխնիկատեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականության, այդ ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառման ապահովմանն ուղղված նպատակային ծրագրերի, ձեռնարկատիրության ոլորտում ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմների, ուղղությունների, գործողությունների մշակմանը և դրանց դիտանցմանը.

2) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտում ինովացիոն գործունեությանը, ինովացիոն արդյունքի առևտրայնացմանը, ինովացիոն նախագծերի և ծրագրերի իրականացմանն ու առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման խթանմանն ուղղված ծրագրերի մշակմանը և դրանց դիտանցմանը.

3) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտում ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակմանը և դրանց դիտանցմանը.

4) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտում ինովացիոն կարողությունների զարգացմանն ու ոլորտի որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ծրագրերի մշակմանը և դրանց դիտանցմանը.

5) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտի տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման ուղղությամբ մասնագիտացված վերազգային ընկերությունների՝

Հայաստան ներգրավման, ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման, հայկական ընկերությունների գլոբալացման խթանման, ոլորտի նորաստեղծ ընկերությունների զարգացման ծրագրերի մշակմանը և դրանց դիտանցմանը.

6) շահագրգիռ մարմինների հետ համատեղ մասնակցում է ձեռնարկատիրություն-գիտություն-կրթություն կապերի ընդլայնման քաղաքականության մշակմանը և դրանց դիտանցմանը.

7) մասնակցում է ձեռնարկատիրության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման ուղղությամբ միջազգային համագործակցության ակտիվացմանն ուղղված աշխատանքներին.

8) մասնակցում է ստեղծագործական արդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականության ու նպատակային ծրագրերի մշակմանը և դրանց դիտանցմանը.

9) մասնակցում է ձեռներեցության զարգացման քաղաքականության մշակմանը և իրականացմանը.

10) մասնակցում է ձեռներեցության զարգացման պետական աջակցության տարեկան ծրագրի մշակմանը, վերջինիս իրականացման ընթացքի նկատմամբ մոնիթորինգի իրականացմանը, հաշվետվությունների ստացմանը և դրանցում պարունակվող տեղեկությունների վերլուծման աշխատանքներին.

11) մասնակցում է ձեռներեցության աջակցության գործիքների մշակմանը, ըստ անհրաժեշտության առկա գործիքակազմի փոփոխության կամ նոր գործիքակազմի ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

12) իրականացնում է ձեռնարկատիրության ոլորտում տեխնիկատեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման միջազգային փորձի ուսումնասիրություն,

13) մասնակցում է պետություն-մասնավոր հատված երկխոսության, համապատասխան վիճակագրական տվյալների և այլ վերլուծությունների իրականացման արդյունքում ձեռներեցության զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտման ու դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացմանը.

14) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության աջակցման ծրագրեր իրականացնող և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խորացման և իրականացվող աջակցության ծրագրերի համակարգման աշխատանքներին.

15) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության աջակցման ծրագրեր իրականացնող օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռներեցության աջակցման ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական բազայի (ռեեստրի) ձևավորմանը և մշտադիտարկմանը, աջակցության ծրագրերի կրկնությունների բացառմանն ուղղված աշխատանքների իրականացմանը.

16) մասնակցում է Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության աջակցման ծրագրեր իրականացնող օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների

հետ համագործակցության խորացմանը, վերջիններիս կողմից իրականացվող ձեռներեցության աջակցման ծրագրերի և միջոցառումների միջոցով Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցությամբ զբաղվել ցանկացող և արդեն իսկ զբաղվող սուբյեկտների շրջանակի ընդլայնման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը.

17) մասնակցում է ձեռներեցության զարգացման խորհրդի նիստերի անցկացման նախապատրաստմանը՝ օրակարգում ներառված հարցերի՝ շահագրգիռ կառույցների հետ նախապես քննարկման, համաձայնեցման և վերլուծման միջոցով.

18) մասնակցում է միջազգային պրակտիկայում առկա և Հայաստանի Հանրապետության նկատմամբ կիրառվող՝ ձեռներեցության պայմանները գնահատելու հարցումների մեթոդաբանությունների ուսումնասիրման աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ տրված գնահատականների պատճառների վերլուծության և անհրաժեշտ բարեփոխումներին ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

19) մասնակցում է ձեռներեցությամբ զբաղվող սուբյեկտների և քաղաքացիների կողմից հարցումների ստացմանը, դրանց վերաբերյալ պարզաբանումների և պատասխանների պատրաստմանը, անհրաժեշտության դեպքում դրանցից բխող քայլեր կատարելու (այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների) վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

20) մասնակցում է ձեռներեցությամբ զբաղվող սուբյեկտների սահմանմանը համապատասխան՝ ձեռներեցության ոլորտի վերաբերյալ վիճակագրության վարման աշխատանքներին.

21) մասնակցում է ձեռնարկատիրության, մասնավորապես՝ ՓՄՁ ոլորտի պարբերական հետազոտում և մոնիտորինգի իրականացմանը, այլ գերատեսչություններից ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացմանը, պետություն-մասնավոր հատված երկխոսության աշխատանքներին:

Իրավունքները

- ձեռնարկատիրության ոլորտում տեխնիկատեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականության մշակման հետ կապված այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ու կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- ձեռնարկատիրություն-գիտություն-կրթություն կապերի ընդլայնման քաղաքականության մշակման և միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ մասնակցել շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների ներգրավմամբ անցկացվող խորհրդակցություններին.
- ստեղծագործական արդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականության ու նպատակային ծրագրերի մշակման հետ կապված մասնակցել շահագրգիռ մարմինների մասնագետների և փորձագետների ներգրավմամբ անցկացվող խորհրդակցություններին.
- ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի մշակման աշխատանքների

իրականացման ընթացքի վերաբերյալ ստանալ հաշվետվություններ.

• մասնակցել ՓՄՁ քաղաքականություն մշակող այլ երկրների գերատեսչությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող հանդիպումներին.

• մասնակցել պարբերաբար կազմակերպվող ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող օտարերկրյա և միջազգային, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների հետ հանդիպումներին.

• իրականացնել վերլուծական աշխատանքներ երկարաժամկետ կարգավորումների հետ կապված.

• ներկայացնել խնդիրների այլընտրանքային լուծումների վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնել ձեռնարկատիրության սուբյեկտների աջակցության նոր գործիքակազմի մշակում.

մասնակցել պարբերաբար կազմակերպվող հանդիպումներին Երևանում և մարզերում գործող ՓՄՁ-ների հետ՝ վերջիններիս գործունեությանը խոչընդոտող խնդիրների հավաքագրման, ինչպես նաև ՓՄՁ աջակցության առկա գործիքների իրազեկման նպատակով:

Պարտականությունները

• ուսումնասիրել ձեռնարկատիրության ոլորտում տեխնիկատեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականության, ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմների, ուղղությունների, գործողությունների, ինովացիոն գործունեությանը, ինովացիոն արդյունքի առևտրայնացմանը, ինովացիոն նախագծերի և ծրագրերի իրականացմանն ու առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման խթանմանն, ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի, ինչպես նաև ինովացիոն կարողությունների զարգացմանն ու ոլորտի որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ծրագրերի մշակման հետ կապված այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը, նյութերը.

• ձեռնարկատիրություն-գիտություն-կրթություն կապերի ընդլայնման քաղաքականության մշակման ուղղությամբ կազմակերպել հանդիպումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ամփոփել հանդիպումների ընթացքում ստացված առաջարկները.

• ուսումնասիրել ստեղծագործական արդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականության ու նպատակային ծրագրերի մշակման հետ կապված համապատասխան շահագրգիռ մարմիններից ստացված մասնագիտական կարծիքները.

• ներկայացնել առաջարկներ միջազգային համագործակցության ակտիվացման և ոլորտային համագործակցության ծրագրերի իրականացման ուղղությամբ.

• ուսումնասիրել ձեռներեցության աջակցության և զարգացման քաղաքականության, ձեռներեցության պետական աջակցության տարեկան ծրագրի իրականացման աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունները.

- մշակել ձեռներեցությամբ զբաղվող սուբյեկտների ձեռնարկատիրական կարողությունների և հմտությունների զարգացման, նորարարության խթանման, արտաքին և ներքին շուկաների հասանելիության, իրազեկվածության բարձրացմանն ուղղված ՓՄՁ աջակցության և զարգացման քաղաքականությունը.
- ուսումնասիրել ՓՄՁ-խոշոր ձեռնարկություններ համագործակցության հնարավորության, պետության կողմից ձեռներեցության սուբյեկտներին տրամադրող ծառայությունների միասնական մատուցմանն հնարավորությունները.
- իրականացնել ձեռներեցության պետական աջակցության տարեկան ծրագրի մշակում, ուսումնասիրել ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերի կրկնությունների բացառման, դրանց իրագործման արդյունավետության առավել բարձրացման և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նույն ուղղությամբ տարվող քաղաքականության նպատակներին համադրման հնարավորությունները.
- մասնակցել ոլորտի բյուջետային հայտերի մշակման աշխատանքներին.
- բացահայտել պետություն-մասնավոր հատված երկխոսությանը և ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնները, մշակել համապատասխան առաջարկություններ.
- մասնակցել ՓՄՁ զարգացման խորհրդի նիստերի կազմակերպմանը, ՀՀ ՓՄՁ զարգացման խորհրդի կազմում գործարար համայնքի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների անդամակցության հայտերի նախապատրաստմանը, հրապարակմանը, խորհրդատվության տրամադրմանը և ներկայացված տեղեկատվության ամփոփմանը.
- մասնակցել միջազգային կառույցների կողմից ձեռներեցության գործունեության պայմանները գնահատող զեկույցներում Հայաստանի դիրքի բարելավմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

նախապատրաստել ձեռներեցության սուբյեկտների և քաղաքացիների կողմից, այդ թվում նաև Կառավարությանն ուղղված հարցումների հետ կապված փաստաթղթերի նախագծեր, ինչպես նաև ներկայացնել կարծիքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Հասարակության հետ կապերի ապահովում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: